

---

## ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հանցագործության որակումը տևական գործընթաց է, որի ժամանակ երբեմն անհրաժեշտություն է առաջանում փոխելու հանցագործության որակումը, կատարելու վերաորակում:

Վերաորակման անհրաժեշտություն կարող է առաջանալ քրեական գործի քննության տարբեր փուլերում, իսկ վերաորակման արդյունքը միշտ ամրագրվում է դատավարական փաստաթղթերում:

Վերաորակումը մի շարք հետևանքներ է առաջացնում: Նախ, այն ապահովում է կատարված արարքի հստակ համապատասխանեցումը քրեական օրենսգրքի նորմին: Բացի այդ, վերաորակման հետևանքով կարող են փոխվել հանցանք կատարած անձի իրավունքները<sup>1</sup>, կարող է փոխվել նաև քրեական գործի հարուցման կարգը. օրինակ՝ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա:

Հարկ է նշել նաև, որ «վերաորակում» հասկացությունը զուտ տեսական է. թե՛ քրեական և թե՛ քրեադատավարական օրենսգրքերում (նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում) այս հասկացությունը չի գործածվում: Վերաորակումը բնորոշելու համար նշված օրենսգրքերում օգտագործվում են «մեղադրյալին վերագրվող արարքի որակումը փոխել»<sup>2</sup>, «մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու»<sup>3</sup> բառակապակցությունները:

Պետք է նշել, որ մինչդատական վարույթում և դատաքննության ընթացքում հանցագործության վերաորակման կանոնները տարբեր են, քանի որ դատարանները որոշ դեպքերում չեն կարող վերաորակում կատարել, եթե դրանով վատթարանում է ամբաստանյալի վիճակը, մինչդեռ նախաքննության մարմինները կաշկանդված չեն վերաորակման գործընթացում: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք միայն մինչդատական փուլում վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվող վերաորակման հիմքերին:

Հանցագործությունների վերաորակման պատճառները կամ հիմքերը կարելի է բաժանել 3 խմբի՝

1. հանցագործության փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկության փոփոխություն,

---

<sup>1</sup> Օրինակ՝ որոշ դեպքերում քրեական գործերով պաշտպանի մասնակցությունը դառնում է պարտադիր:

<sup>2</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հոդված 112:

<sup>3</sup> Նույն տեղում, հոդված 197:

2. քրեական օրենքի փոփոխություն,

3. սխալ որակում:

Նախաքննության ընթացքում հանցագործության փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկության փոփոխության ոչ բոլոր դեպքերում է կատարվում վերաորակում: Նախ, վերաորակման անհրաժեշտություն չի առաջանում, եթե չեն հաստատվել մեղադրանքի հիմքում դրված հանգամանքները: Օրինակ՝ նախաքննության ընթացքում պարզվում է, որ հանցանքը կատարել է ոչ թե մեղադրյալը, այլ մեկ ուրիշ անձ: Տվյալ դեպքում քրեական գործով վարույթը արդարացնող հիմքով կարճվում է, և դադարեցվում է քրեական հետապնդումը: Սակայն կարծում ենք, որ տվյալ դեպքում ընդհանրապես խոսք չի կարող լինել վերաորակման մասին, քանի որ որակում որպես այդպիսին չի կատարվում: Հանցագործության որակումն անձի կողմից կատարված արարքի (գործողության կամ անգործության) և քրեական օրենսգրքում ամրագրված հանցակազմի կոնկրետ տեսակի բոլոր հատկանիշների միջև հստակ համապատասխանության բացահայտումը, նույնության հավաստումը ու իրավաբանական ամրագրումն է<sup>4</sup>: Քանի որ վերաորակումը համարվում է որակման մի տեսակ, ուստի այն պետք է պարունակի որակման բոլոր հատկանիշները: Եթե չի ապացուցվում անձի կողմից տվյալ հանցանքը կատարելու հանգամանքը, հետևաբար դատավարական փաստաթղթում քրեական օրենսգրքին հղում չի կատարվում, ուստի որակում, այդ թվում նաև վերաորակում, չի կատարվում:

Վերաորակման անհրաժեշտություն չի առաջանում նաև այն դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները փոխվում են քանակապես և ոչ թե որակապես: Օրինակ՝ եթե նախաքննության ընթացքում պարզվում է, որ սպանությունը կատարվել է հրազենի ոչ թե երկու, այլ երեք կրակոցով: Սակայն այստեղ պետք է մեկ նկատառում. լինում են դեպքեր, երբ փաստական հանգամանքների քանակական փոփոխությունը բերում է դրանց որակական փոփոխության, ինչը կարող է վերաորակման հիմք լինել: Օրինակ՝ եթե պարզվի, որ սեռական հարաբերությունը տեղի է ունեցել 16 տարին չլրացած միևնույն անձի նկատմամբ ոչ թե մեկ անգամ, այլ պարբերաբար, հետևաբար արարքում առկա է ծանրացնող հանգամանք, և այն պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 141 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Վերաորակման անհրաժեշտություն չի առաջանում նաև այն դեպքում, երբ փոփոխված փաստական տվյալները վերաբերում են գործի այնպիսի հանգամանքներին, որոնք որևէ իրավական նշանակություն չունեն, այսինքն՝ չեն վերաբերում հանցակազմի տարր համարվող հատկանիշներին: Օրինակ՝ պարզվում է, որ գողոնը տեղափոխվել է ոչ թե «ՎԱԶ 2106», այլ «ՎԱԶ 2107» մակնիշի ավտոմեքենայով:

Հնարավոր է իրավիճակ, երբ փոխվի ոչ թե փաստական հանգամանքի վերաբերյալ տեղեկությունը, այլ հենց փաստական հանգամանքը, ինչը ևս արարքի վերաորակման հիմք է: Օրինակ՝ սպանության փորձով հարուցված լինի քրեական գործ, հետագայում տուժողը մահանա, ընդ որում՝ մահվան անմիջական պատճառ լինի հանցավորի արարքը և ոչ թե բժշկի

<sup>4</sup> Стн А. Ю. Епихин. Квалификация преступлений (учебное пособие). М., 2005, էջ 6:

կողմից թույլ տրված սխալը: Տվյալ դեպքում փոխվում է ոչ թե փաստական հանգամանքի վերաբերյալ տեղեկությունը, այլ հենց փաստական հանգամանքը, ինչը արարքը սպանություն վերաորակելու հիմք է:

Հանցագործությունների վերաորակման երկրորդ հիմքը քրեական օրենքի փոփոխությունն է: ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Հոդվածի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ նոր օրենքով վերաորակում կարելի է կատարել, եթե կատարված արարքն ինչպես նախկին, այնպես էլ նոր օրենքով համարվում է հանցագործություն, ընդ որում՝ նոր օրենքը նախկինի համեմատ ավելի մեղմ է: Քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել, համաձայն որի՝ քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,
3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառնիչ են և ունեն ինպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն<sup>5</sup>:

Մեղմ կարելի է համարել նաև այն օրենքը, որի ուժի մեջ մտնելով՝ վերանում է հանցանքը ծանրացնող կամ առանձնապես ծանրացնող հանգամանքը: Օրենքը մեղմ է համարվում նաև այն դեպքում, երբ հոդվածի դիսպոզիցիայում ավելանում է մի նոր հատկանիշ, որը հանգեցնում է հանցակազմի շրջանակի նեղացման: Որպեսզի պարզենք նոր օրենքը նախկինի համեմատ մեղմ է, թե խիստ, պետք է համեմատել հոդվածների և՛ դիսպոզիցիաները, և՛ սանկցիաները:

Եթե նոր օրենքը ապաքրեականացնում է արարքը, ապա վերաորակման անհրաժեշտություն չի առաջանում: Թեև տեսության մեջ կարծիք է արտահայտված, որ տվյալ դեպքում ևս կատարվում է վերաորակում՝ լայն իմաստով<sup>6</sup>:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը (ԳԴ1/0013/01/11):

<sup>6</sup> Տե՛ս «Уголовное право России». Учебник для вузов. В 2-х томах. Том 1, Общая часть, М., 1997, էջ 71:

Վերաորակման անհրաժեշտություն չի առաջանում նաև այն դեպքում, երբ տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեափրավական նորմը ճանաչվում է հակասահմանադրական, քանի որ արարքի հանցավորությունը սահմանող նորմը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումն այդ նորմի գործողությունը դադարեցնելու հիմք է, ինչն իր նշանակությամբ հավասարազոր է ապաքրեականացմանը<sup>7</sup>:

Որակման առումով բարդություններ կարող են առաջանալ տևող հանցագործությունների նկատմամբ քրեական նոր օրենքը կիրառելիս: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 12 հոդվածի՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում է դա կատարելու ժամանակ գործող օրենքով: Եթե տևող հանցագործության թեկուզև մի մասը կատարվել է նոր օրենքի ժամանակ, ապա պետք է կիրառվի նոր օրենքը, անկախ այն հանգամանքից, թե նոր օրենքը նախկինի համեմատ ավելի մեղմ է, թե ավելի խիստ: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ արարքի վերաորակում չի կատարվում, այլ արարքը որակվում է հանցանքը կատարելու պահին գործող օրենքով:

Հնարավոր է իրավիճակ, երբ տվյալ հանցագործությունը սահմանող հոդվածը ուժը կորցրած ճանաչվի, սակայն արարքը չապաքրեականացվի, այլ դրա համար պատասխանատվություն սահմանվի մեկ այլ հոդվածով: Վերաորակման առումով բարդություններ չեն առաջանա, եթե հոդվածի ուժը կորցնելուց հետո կատարված արարքը պետք է որակել այլ, ավելի մեղմ սանկցիա ունեցող հոդվածով: Հակառակ պարագայում կարող են առաջանալ որոշակի խնդիրներ: Եթե քրեական օրենքի փոփոխությամբ արարքը ոչ թե ապաքրեականացվում է, այլ դրա համար պատասխանատվություն է սահմանվում մեկ այլ, ավելի խիստ պատասխանատվություն սահմանող քրեափրավական նորմով, ապա ենթակա է կիրառման նախկին խնբագրությամբ օրենքը (ուժը կորցրած օրենք)<sup>8</sup>: Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով<sup>9</sup> առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 218 հոդվածը (պատանդ վերցնելը), միաժամանակ ընդլայնել ահաբեկչության համար պատասխանատվություն սահմանող 217 հոդվածի դիսպոզիցիան՝ դրա մեջ ներառելով «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1999 թ. միջազգային կոնվենցիային կից փաստաթղթերով նախատեսված ցանկացած գործողությունը: Ընդ որում, առաջարկվող փոփոխությամբ 217 հոդվածը ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում, քան պատանդ վերցնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածը: Այդ պարագայում, ղեկավարվե-

<sup>7</sup> Տե՛ս Մ. Մարկոսյան, Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2011, էջ 128:

<sup>8</sup> Տե՛ս «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации /постатейный/». М., 2013, էջ 32:

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ Կ-135՝-01.11.2012-ՊԼ-010/1:

լով ՀՀ քրեական օրենսգրքի 12 և 13 հոդվածներով նախատեսված դրույթներով, ենթակա է կիրառման նախկին խմբագրությամբ գործող քրեաիրավական նորմը, այսինքն՝ տվյալ դեպքում վերաորակում որպես այդպիսին չի կատարվում, այլ միայն դատավարական փաստաթղթերում անձի կատարած արարքը տեխնիկական առումով համապատասխանեցվում է նոր օրենքին:

Հնարավոր է իրավիճակ, երբ արարքը վերաորակվի մի քանի անգամ, այսինքն՝ հանցանքը կատարվի մեկ այլ օրենքի գործողության ժամանակ, հետագայում ընդունվի ավելի մեղմ օրենք, սակայն մինչև գործի քննության մինչդատական փուլի ավարտը ընդունվի նոր՝ ավելի խիստ օրենք: Այս դեպքում խոսքը միջանկյալ քրեական օրենքի կիրառման մասին է: Որոշ հեղինակներ գտնում են, որ միջանկյալ քրեական օրենքը կիրառելու իրավական հիմքեր չկան, քանի որ այն չի գործել ո՛չ հանցանքի կատարման պահին և ո՛չ էլ գործի քննության պահին, ուստի պետք է կիրառվի նախկին կամ նոր օրենքը, ելնելով այն հանգամանքից՝ նոր օրենքն ունի հետադարձ ուժ, թե ոչ<sup>10</sup>: Միաժամանակ նույն հեղինակները նշում են, որ տվյալ հանցագործության համար չպետք է նշանակվի ավելի խիստ պատիժ, քան միջանկյալ քրեական օրենքով սահմանված պատիժն է: Սակայն կարծում ենք, որ պատժի խստացման սահմանափակումը միջանկյալ քրեական օրենքով, որը չի գործել ո՛չ հանցանքի կատարման պահին և ո՛չ էլ պատժի նշանակման պահին, իրավական հիմնավորում չունի, քանի որ միջանկյալ քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը «լռում է», ուստի նպատակահարմար է օրենսդրորեն կարգավորել միջանկյալ քրեական օրենքի կիրառման հիմքերը և պայմանները: Մասնավորապես առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի 4-րդ մասով նախատեսել հետևյալ դրույթը.

**«Եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը գործել է այլ օրենք, ապա կիրառվում է այն օրենքը, որը առավել բարենպաստ է հանցանք կատարած անձի համար»:**

Միջանկյալ քրեական օրենքի հետադարձ ուժն ունի որոշակի առանձնահատկություն. եթե քրեական օրենքին հետադարձ ուժ տալիս դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ընդունելը հանցանք կատարած, պատիժը կրող կամ դատվածություն ունեցող անձանց վրա, ապա միջանկյալ քրեական օրենքի գործողությունը տարածվում է միայն այն անձանց նկատմամբ, ովքեր հանցանք են կատարել մինչև այդ օրենքը ուժի մեջ մտնելը, և մինչև այդ օրենքի ուժը կորցնելը նրանց կողմից կատարված հանցանքի համար դատավճիռ դեռ չի կայացվել:

Համանման դրույթ-սկզբունք է նախատեսված նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում. մասնավորապես՝ դաշնագրի 15 կետի համաձայն՝ « ... *Եթե հանցագործությունից հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցանքը կատարած անձի վրա*»:

Վերաորակման առանձին հիմք է սխալ որակումը: Տվյալ դեպքում գործի փաստական հանգամանքները և քրեական օրենքը չեն փոխվում,

<sup>10</sup> Տե՛ս **М. И. Блум, А. А. Тилле. Обратная сила закона. М., 1960, էջ 129:**

սակայն կատարվում է վերաորակում, քանի որ վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ է տրվել տրամաբանական սխալ, ինչը սխալ նորմի կիրառման պատճառ է դարձել:

Կարծում ենք, որ օրենքի միատեսակ կիրառման անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է քրեական օրենսգրքում լրացումներ և (կամ) փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքներում դրույթներ նախատեսել օրենքի կիրառման վերաբերյալ՝ որպես մոդել ընտրելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը:

**Բանալի բառեր** – *հանցագործություն, որակում, վերաորակում, դատավարական փաստաթղթեր, մինչդատական վարույթ, քրեական օրենսգիրք, քրեական դատավարության օրենսգիրք*

**АРМИНЕ МЕЛИКСЕТЯН – Основы переквалификации преступлений в досудебном процессе.** – Квалификация преступлений – процесс, в ходе которого иногда возникает необходимость изменить квалификацию. Она может возникнуть на разных стадиях уголовного процесса, и результат переквалификации всегда фиксируется в процессуальных документах.

Правила переквалификации преступлений в досудебном процессе и в ходе судебного разбирательства различны. Сам термин "переквалификация" – сугубо теоретический, он не используется в уголовном и уголовно-процессуальном кодексах. Исходя из необходимости применять закон единообразно, желательно, чтобы законы об изменениях и дополнениях к законам содержали положения о применении законов.

**Ключевые слова:** *преступление, квалификация, переквалификация, процессуальные документы, досудебный процесс, уголовный кодекс, уголовно-процессуальный кодекс*

**ARMINE MELIKSETYAN – The Grounds of Crime Requalification at Pre-trial.** – Crime qualification is a process that lasts over a time and sometimes it's necessary to change qualification of the crime.

Need of requalification can occur at different stages of criminal investigation however the result of requalification always has to be fixed in procedural acts.

It should be mentioned that rules of crime requalification differ at pre-trial and trial stages, as courts can't change the qualification of the criminal deed if the latter one worsens defendant's condition. While investigation bodies are not bound in requalification process. The grounds of requalification at pre-trial stage will be discussed in the article presented.

It should also be noted that term requalification has purely theoretical nature and it is not used both in criminal and procedural codes.

Based on necessity of the uni-approach implementation of the laws, it is necessary to provide provisions on the implementation of the laws in the legal acts, as well as amendments to the laws in force.

**Key words:** *Crime, qualification, requalification, procedural acts, pretrial, criminal code, procedural code*